ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ

(Պրոֆ. Վարազդատ Հարությունյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

1915 թվին, հայոց ցեղասպանության տարին, նա ընդամենը վեց տարեկան էր, երբ Վանում թողնելով իր հայրական տունն ու անուշաբեր մրգերով լի այգին, մեծերի հետ բռնեց գաղթի մահաբեր ճանապարհը, հոգնաբեկ ու ցավատանջ սրտով հասավ Վաղարշապատ: Թուրքական յաթաղանից մազապուրծ բազմաթիվ գաղթականներ լցված էին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի շուրջը, վանքային լճի շրջապատում, կողքի անտառակի ծառերի տակին, իսկ մոլեգնող տիֆի համաճարակը սկսել էր իր հունձքը:

Առաջին զոհին այստեղ տալուց հետո, հայրն իր ընտանիքը փոխադրեց Թիֆլիս, սակայն ինքը հիվանդանոցում վախճանվեց նույն տարվա աշնանը: Այնուհետև որբանոց, ապա փախուստ որբանոցից, իրենց գոյությունը պահպանելու համար, եղբոր հետ ստիպված էին փողոցներում կոշիկ սրբել կամ ջուր ծախել: Այդպիսին է եղել նրա մանկության տարիների ողիսականը:

Սակայն դա ոչ միայն իր ճակատագիրն էր, այլև եղեռնական սերնդին պատկանող շատ ու շատ որբուկներ, իրենց կյանքը տևական մաքառումով ընթացավ, որպեսզի կարողանան դառնալ հարազատ ժողովրդին պիտանի գործիչներ, նրանք դարձան գրող կամ բանաստեղծ, երգահան կամ նկարիչ, դասախոս կամ ուսուցիչ, ճարտարապետ կամ շինարար, ժողովրդական տնտեսության այլ և այլ բնագավառի մասնագետ կամ վարպետ, հասարակական կամ պետական գործիչներ: Վարազդատ Հարությունյանը մեկն է դրանցից: Ապրելով զրկանքներով լի մանկություն՝ այնուամենայնիվ նրան հաջողվեց միջնակարգ կրթություն ստանալ: 1927 թ. ավարտելով Թիֆլիսի հայկական դպրոցներից մեկը՝ մեկնեց Լոռի: Շնող և Արճիս գյուղերում չորս տարի որպես գյուղական ուսուցիչ պաշտոնավարելով՝ նա իր առաջին ծառայությունն է մատուցել հարազատ ժողովրդին:

Այնուհետև ուսման ծարավ երիտասարդը 1931 թ. փոխադրվել է Երևան և ընդունվել նորաբաց պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը: Ստեղծագործական շնորհքով օժտված ուսանողը դեռևս ուսանողական տարիներին իրեն ցուցաբերեց որպես շնորհալի և աշխատասեր, իր մասնագիտության մեջ խորանալու ընդունակ, հասարակական լայն հետաքրքրությունների տեր: Վերջինս էլ պատճառ դարձավ, որպեսզի նրան, դեռևս երրորդ կուրսի ուսանողին, վստահվի «Խորհրդային ճարտարապետ» բազմատպաքանակ ուսանողական թերթի պատասխանատու խմբագրի հասարակական պարտականությունը:

Գերազանց առաջադիմությամբ ընթացավ նրա ուսումնառության տարիները, նաև նրա մասնակցությունը պրակտիկ նախագծմանը Երևանի և Մոսկվայի վարպետների արվեստանոցներում: 1937 թ. պաշտպանելով «Հայաստանի պատմության թանգարան» թեմայով իր դիպլոմային նախագիծը, նա թևակոխեց իր կյանքի նախասիրված փուլը: Վերընթաց եղավ Վարազդատ Հարությունյանի կյանքի ուղին: Ավարտելուց հետո թողնվեց աշխատանքի որպես ճարտարապետության ամբիոնի ասիստենտ, իսկ մեկ տարի անց նրան վստահեցին շինարարական ֆակուլտետի դեկանի դժվարին ու պատասխանատու պարտականությունը: Վարչական պաշտոնը նրան չէր կարող բավարարել, քանզի դեռևս ուսանող տարիներին նա առանձին հետաքրքրություն էր ցուցաբերում հայկական ճարտարապետության հուշարձանների նկատմամբ ու մտադրվել էր զբաղվել նրանց հետազոտությամբ, զինվորագրվել դրա հիմնադիր Թորոս Թորամանյանի ազգանվեր գործին:

Խորապես գիտակցելով, որ դրա համար կարիք կա իր գիտելիքները լրացնել, 1939 թվին, առանց մանկավարժական աշխատանքից կտրվելու, նա ընդունվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության և հնագիտության ինստիտուտի ասպիրանտուրա: Դա մեծապես նպաստում է խորանալ հայոց պատմության և հնագիտության հարցերում, տիրապետել գրաբարին, որպեսզի իր համար մատչելի դառնան մատենագրական աղբյուրները: Նույն տարիներին նա գործուն մասնակցություն է ունենում Թորոս Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» առաջին հատորի հրատարակման և որպես հնագիտական արշավախմբի ճարտարապետ մասնակցում է Դվինի քաղաքատեղի պեղումներին: Դրանք եղան սկսնակ գիտնականի մասնագիտական թրծման սկիզբը, որը ցավոք կարճատև եղավ:

Հայրենական պատերազմի սկզբից նա զորակոչվեց բանակ: Իրեն տրված առաջադրանքն ավարտելուց հետո 1942 թվին զորացրվեց ու վերադարձավ պոլիտեխնիկական ինստիտուտ, այս անգամ ստանձնելով ուսումնական մասի վարիչի պարտականությունը, միևնույն ժամանակ դասավանդելով ճարտարապետության ամբիոնում: Իր անմիջական ջանքերով հաջողվեց 1944 թ. վերաբացել ճարտարապետության բաժինը, ինչի շնորհիվ հետպատերազմյան տարիներին ինստիտուտն ավարտեցին շնորհաշատ ճարտարապետների մի քանի սերունդներ: 1945 թ. Վարազդատ Հարությունյանը համատեղության կարգով նշանակվում է Հայաստանի կառավարությանն առընթեր ճարտարապետության գործերի վարչության պետի առաջին տեղակալ և այդ վարչության տնօրինությանը հանձնված հնությունների պահպանության կոմիտեի նախագահ: Այս պաշտոնավարությունները օգնեցին ճարտարապետության պրակտիկ հարցերում փորձ ձեռք բերելուն, ինչպես նաև ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգ-

ՆԸՄԱՆ գործում հմտանալուն: Ինչ խոսք, որ այդ հանգամանքը ոչ միայն դրական անդրադարձ ունեցավ նրա մանկավարժական աշխատանքներում, այլև ճարտարապետության ամբիոնը որպես վարիչ 1945—1990 թթ. ընթացքում ղեկավարելիս: Մշտապես ապրելով բազմազբաղ կյանքով՝ նա հնարամտորեն էր կարողանում ժամանակ գտնել գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու համար: 1946 թ. Լենինգրադում հաջողությամբ պաշտպանելով իր «Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» դիսերտացիան՝ առաջինը Հայաստանում ստացավ ճարտարապետական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հիշյալ աշխատությունն առանձին գրքով լույս տեսավ 1950 թվին: Դրան հաջորդեց «Հայ ճարտարապետության հուշարձանները» պատկերազարդ մենագրությունը ռուսերեն լեզվով, որը լույս տեսավ 1951 թվին, Մոսկվայում:

Դժկամությամբ հրաժեշտ տալով հնությունների պահպանության կոմիտեին, որտեղ նա յոթ տարի շարունակ բեղմնավոր գործունեություն ծավալեց հայրենի կոթողների պահպանության և վերականգնման ուղղությամբ:

1951 թվին Վարազդատ Հարությունյանը նշանակվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի սեկտորի տնօրեն: Օժանդակելով հանդերձ հայկական արվեստի տարբեր բնագավառներին նվիրված աշխատությունների արարման ու հրատարակմանը, այստեղ ծնունդ առավ իր և Կոնստանտին Հովհաննիսյանի համատեղ «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» ռուսերեն մենագրությունը, որը լույս տեսավ 1955 թվականին:

Սկսած 1955 թվականից, նրա գործունեությունը կենտրոնացավ միայն Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, ուր ճարտարապետության ամբիոնի վարիչի իր պարտականությունը հաջողությամբ կարողանում էր զուգակցել մանկավարժական մեթոդական աշխատանքի հետ, դասավանդելով ճարտարապետության պատմության և տեսության կարևորագույն բաժինները, այդ թվում հայկական ճարտարապետության պատմության, որի հիմնադիրը եղավ ուղիղ կես դար առաջ:

Ինչպես միշտ, նա կարողանում էր իր բազմազբաղ պարտականությունները զուգակցել գիտահետազոտությունների հետ, շարադրել ու հրատարակել բազմաթիվ գիտական աշխատանքներ, մենագրություններ:

1960 թվականին լույս տեսավ նրա «Միջնադարյան Հայաստանի քարավանատները և կամուրջները», 1964 թ.՝ «Անի քաղաքը» (առանձին հայերեն և ռուսերեն) մենագրությունները, «Քաղաքաշինությունը հին և միջնադարյան Հայաստանում» ատենախոսավալ մենագրության համար 1964 թվին նրան նույնպես առաջինը Հայաստանում շնորհվեց ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան, դրա շնորհիվ նաև պրոֆեսորի կոչում:

Աշխատունակ ու պրպտուն, միշտ նորահայտ գործերով նա զգալի չափով հարստացրեց հայ ճարտարապետության պատմությանը նվիրված մատենաշարը: Հատկապես ընդգրկեց մինչ այդ չուսումնասիրված բնագավառները, ինչպիսիք էին քաղաքաշինության և աշխարհիկ ճարտարապետության բնագավառները, հայ ճարտարապետության զարգացման օրինաչափությունները և այլն: Դրա հետ միասին գիտնականի տեսադաշտում միշտ եղել է արդի հայ ճարտարապետությանը և նրա վարպետների ստեղծագործության բնութագրությունները, որոնց նվիրված են առանձին կամ հեղինակակցությամբ լույս ընծայած հարյուրավոր հոդվածները «Երևան» (1968), «Սո-

վետական Հայաստանի ճարտարապետություն» (1972 թ.) մենագրությունները: Դրան ավելացնենք նաև իր և Մորուս Հասրաթյանի հեղինակակցությամբ 1975 թվականին Բեյրութում հրատարակված «Հայկական հուշարձաններ» շքեղ ու պատկերազարդ հատորը՝ հայերեն, ֆրանսերեն և անգլերեն տեքստերով: Որպես հայ ճարտարապետության լավագույն գիտակ, նա ընդգրկվել է «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի հեղինակների կազմում: Իր բազմաթիվ հոդվածները լույս են տեսել «Հայկական հանրագիտարանում», որի հրատարակչության խորհրդի անդամ էր:

Պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանի ծանրակշիռ վաստակի համար նրան շնորհվեց Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, պարգևատրվեց «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Պատվո նշան» շքանշաններով, ինչպես նաև Թորոս Թորամանյանի անվան ակադեմիական մրցանակ, որը Զվարթնոցի ավերակներում 1968 թվականին մրցանակակրին հանձնեց ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը:

Նրա ազգանվեր գործունեության մեջ կարևոր տեղ է գրավել նաև ճարտարապետության պատմության ուսումնասիրության նոր սերնդի դաստիարակությունը: Իր գիտական ղեկավարությամբ 16 ասպիրանտներ հայցել են թեկնածուական (այդ թվում՝ մեկ ֆրանսիացի) գիտական աստիճաններ: Միևնույն ժամանակ հայ ճարտարապետության պատմությանը տիրապետելու նպատակով նրա մոտ ստաժավորում են անցել Բոստոնի, Նյու-Յորքի (ԱՄՆ) ու Եգիպտոսի համալսարաններից գործուղվածները:

Թերի կլիներ Վարազդատ Հարությունյանի գործունեության բնութագիրը, եթե սահմանափակվեինք վերոգրյալով: Նրա կյանքում մշտապես տեղ է գրավել հասարակական գործունեությունը, ինչում մեծապես դրսևորվել է հայորդու քաղաքացիական դիրքորոշումը: Ուղղակի զարմանք է պատճառում, որ այդքան բազմազբաղ մանկավարժն ու գիտնականը, նաև ճարտարապետության բնագավառի գործիչը ինչպես է ժամանակ գտել ակտիվ մասնակիցը լինել Արտասահմանյան երկրների հետ մշակույթի ընկերության, Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեի, «Գիտելիք» ընկերության գործունեությանը: Դրա հետ մեկտեղ նա իր կյանքի 25 տարին նվիրել է Հայաստանի ճարտարապետների միության (13 տարի որպես նախագահի տեղակալ, 12 տարի՝ նախագահ), 30 տարի՝ Պատմական հուշարձանների պահպանության ընկերությանը, որի հանրապետական խորհրդի նախագահը կարողանում է մնալ, չնայած իր առաջացած տարիքին:

Իր նախաձեռնությամբ է ստեղծվել «Վասպուրական» հայրենակցական միությունը, որի նախագահն է եղել շուրջ 40 տարի, իսկ այժմ արժանացել է պատվո նախագահի կարգին:

Առանձնապես գնահատելի է Վարազդատ Հարությունյանի կեսդարյա ծառայությունը Հայ Առաքելական Եկեղեցու կենտրոն Ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Դեռևս Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի գահակալության տարիներից է այն սկսվել՝ առավել մեծ դրսևորում ստանալով Վազգեն Առաջինի գահակալության տարիներին: Լուսավորչի գահին արժանանալու հաջորդ տարվանից նա գործել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովում, իսկ սկսյալ 1971 թվից՝ որպես նախագահ գլխավորել է այն: Հանրահայտ է, թե ինչպիսի նվիրվածությամբ է այդ հանձնաժողովը օժանդակել իրականացնելու լուսահոգի Կաթողիկոսի շինարարական ծրագրերի իրականացմանը: Դրա հանգամանալից պատմությունը ամփոփված է

Վարազդատ Հարությունյանի «Եկայք շինեսցուք» հուշական գրքում, որը շարադրված է կատարվածի լավագույն իմացությամբ և մասնագիտական հիմնավորումներով:

Պրոֆեսորի տևական ծառայությունը Մայր Աթոռին Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի բարձր գնահատականին է արժանացել հատուկ կոնդակով, որում նշվում է. «Ուրախ եմ սրտով ի նշանավորումն ի գնահատումը հասարակական կարգով Ձեր երկար տարիների օգտաշատ աշխատանքի Ս. Էջմիածնին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի իբրև հմուտ և հեղինակավոր նախագահի ի խնդիր Մայր Աթոռի շինարարական ծրագրերի կենսագործման, այսու Մեր կոնդակով հայտնում եմ Ձեզ մեր ջերմ շնորհակալությունը»: Կոնդակն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մեր ժողովուրդը միշտ երախտապարտ են մնալու Ձեր շնորհաշատ ծառայությանց համար և միշտ հարգանքով են հիշելու Ձեր անունն ու Ձեր վաստակը»: Մի շնորհակալագիր էլ ստացավ Ալեք Մանուկյանից, որպես աջակից «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» շինարարության ավարտի և հանդիսավոր գործարկման առթիվ:

Հայ ճարտարապետության պատմաբաններից նա թերևս միակն է, որը ոչ միայն իր հետազոտությունների համար նեկտար է պաշարել հայրենի կոթողներից, այլև շուրջ կես դար շարունակ նվիրվել է դրանց նկատմամբ խնամքի և հոգատարության սրբազան պարտականությանը:

Դեռևս Հնությունների պահպանության կոմիտեից, իսկ այնուհետև Հանրապետական ընկերության պաշտոնում իր անմիջական ջանքերով ու գիտական ղեկավարությամբ, մասնակի կամ ամբողջական վերականգնման են ենթարկվել ութսունի չափ պատմա-ճարտարապետական հուշարձաններ: Դրանցից առանձնապես հիշատակելի են Գնդեվանքի, Հայավանքի և Վանեվանքի վանքային համալիրները, Ամբերդի, Բջնիի Ս. Սարգիս, Ոսկեպարի Ս. Գևորգ, Ալայազի Զորաց և Ս. Կարապետ, Արենիի Ս. Աստվածածին, Դաշտադեմի Ս. Քրիստափոր, Սառնաղբյուրի Ս. Գևորգ, Մոավյանի Ս. Գևորգ, Կապուտանի Ս. Մինաս, Արտաշավանի Ս. Ամենափրկիչ և այլ եկեղեցիներ: Այժմ էլ, չնայած իր առաջացած տարիքին, դժվարին ջանքեր է գործադրում Թալինի լեռներում, Ծովից 2000 մետր բարձրության վրա գտնըվող, Գառնահովիտ գյուղում վերականգնելու համար Ս. Գևորգ Հռիփսիմեատիպ տաճարը: Նրա ղեկավարությամբ տարիների ընթացքում հարյուրից ավելի ճարտարապետներ են ավարտել հուշարձանների վերականգնման մասնագիտությամբ:

Նրա գործունեության բնագավառներից մեկն էլ հայ ճարտարապետության պրոպագանդումն է Հայաստանում և սփյուռքահայ գաղթօջախներում: Դրան են ծառայել մեր հուշարձանների մասին գիտահանրամատչելի գրականության հրատարակումները, ռադիո-հեռուստատեսային ելույթները, թերթերում հրատարակված բազմաթիվ հոդվածները: Բազմաշնորհ հայորդին աստվածատուր մի շնորհքով է օժտված, հանճարեղ Պարույր Սևակի բնորոշմամբ «Կոմիտասի անվկայագիր աշակերտն է», կարող էր երգիչ դառնալ, բայց կյանքում այլ ընտրանք ունեցավ: Չնայած դրան, երգով են անցել նրա տխուր և ուրախ օրերը, երգը նրան ուղեկցում է մինչև հիմա: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հորդորանքով, պաշտոնական ճաշկերույթների առիթներով՝ տեղի ունեցած նոր Վեհարանում և Հայկաշենի ամառանոցում, քանի-քանի անգամներ Վարազդատ Հարությունյանը սեղանը «ծաղկեցրել» է իր ծննդավայր Վան-Վասպուրականի հոգեզյալ երգերով:

Հիրավի, բացառիկ է հոբելյարի աշխատասիրությունը, որն առաջացած տարիքում ոչ մի չափով չի նվազել: Դրա փայլուն ապացույցն է 1985 թվին ռուսերեն լեզվով լույս տեսած «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը», վերոհիշյալ «Եկայք շինեսցուք» (1989 թ.) և 1992 թվին լույս տեսած նրա գլուխգործոցը՝ «Հայկական ճարտարապետության պատմություն» բազմաշխատ ստվարածավալ մենագրությունները: Տարիքը չխանգարեց նրան 1991 թվին ուղևորություն կատարել դեպի Թուրքիա, լինել Կարսում, դեգերել Անիի ավերակներում, մի քանի օր ապրել իր ծննդավայր Վանում, այցելել Վարագավանքի ավերակները, ըմբոշխնել Աղթամար տաճարի հմայքը, իր երգերը հնչեցնել նրա կամարների տակ:

Ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Թորոս Թորամանյանի անվան ակադեմիական մրցանակի դափնեկիր, եռակի շքանշանակիր Վարազդատ Հարությունյանի անելիքները դեռևս սպառված չեն, հրատարակության ընթացքի մեջ են երեք գրքեր, մյուսները հերթի են սպասում:

Սխրալից ու բեղմնավոր կյանքով ապրած հոբելյարին մաղթենք վանեցիական երկար կյանք, բարեկեցության նորանոր իրագործություններ իր ազգանվեր գործունեության բոլոր բնագավառներում:

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Վաստակավոր ճարտարապետ